Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան № TUR-03 «Գորիս համայնքի ժառանգության հանգույցի վերականգնում» մրցույթի վերաբերյալ 03.01.2020թ. 21:38:41 Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց՝ «Եթե կազմակերպությունը Լոտ 1 և Լոտ 2 չափաբաժինների համար պահանջվող լիցենզիայի շրջանակներում ունի նմանատիպ կատարված աշխատանքներ, բայց աշխատանքներում ներառված չեն 1.Գետի հունի մաքրման առնվազն 300 գծային մետր ծավալի չափով փորձ,
2.Փողոցների սալապատման աշխատանքներ՝ առնվազն 200 մ2 ծավալի չափով փորձ,
3.Հենապատի կառուցման և/կամ վերակառուցման աշխատանքներ՝ առնվազն 50 մ3 ծավալի չափով փորձ, 1.չորսվակասալերով սալապատման առնվազն 500 մ2 ծավալի չափով փորձ:

Ապա մյուս աշխատանքները համարվում են նմանատիպ թե ոչ»

Պատասխան՝ Համաձայն վերոնշյալ մրցութային փաթեթի III բաժնի-«Գնահատման և որակավորման չափանիշներ» «Որակավորում» ենթաբաժնի «Փորձառություն» 4.2 (ա) կետի-«Հատուկ շինարարական և պայմանագրի կառավարման փորձ» 20-րդ ծանոթագրության. նմանատիպ պայմանագրերի «Նմանությունը որոշվում է հետևյալ կերպ՝
Լոտ 1՝ գետի հունի մաքրման և հենապատերի երեսապատման վերականգնման,
Լոտ 2՝ քաղաքացիական շենքերի կառուցման և/կամ վերակառուցման,
Լոտ 3՝ քաղաքացիական շենքերի կառուցման և/կամ վերակառուցման,
պայմանագրերի առկայությամբ:»:

Իսկ հարցում հիշատակված Լոտերի հատուկ աշխատանքները համաձայն 4.2 (բ) կետի 25-րդ ծանոթագրության կարող են ներկայացվել 4.2(ա) կետում նշված ժամանակահատվածի համար նմանատիպ պայմանագրերով կամ ցանկացած այլ մեկ կամ մի քանի պայմանագրերով՝ ապահովելով աշխատանքների ընդհանուր ծավալի նվազագույն պահանջը:

Հարգանքով,

Արթուր Սողոմոնյան
ՀՏԶՀ-ի գնումների բաժնի պետ

9 հունվարի 2020թ.